

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԿ

«ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ»

Հաշվետվություն փորձարկված մեթոդաբանության վերաբերյալ

Երևան, 2016



Սույն հաշվետվության պատրաստումը հնարավոր է դարձել իրականացնել Վիշեգրադ միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ձևավորել ապացույցների վրա հիմնված շահերի պաշտպանություն հանուն իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման Արևելյան գործընկերության երկրներում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից:

Հաշվետվության մեջ արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են **«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին** և հնարավոր է, որ չհամընկնեն Վիշեգրադ միջազգային հիմնադրամի տեսակետների հետ:

Սույն հաշվետվությունը կազմվել է՝

Զարուհի Ավետիսյանի,

Նարեկ Դադունցի կողմից

Ծրագիրն իրականացվել է Վիշիգրադ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ՝ նպատակ ունենալով Արևելյան գործընկերության անդամ երկրների, մասնավորապես՝ Հայաստանի և Վրաստանի հետ կիսել V4 երկրների (Լեհաստան, Հունգարիա, Սլովակիա, Չեխիա) փորձն իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման խթանման գործում:

Ծրագիրն իրականացվել է հետևյալ կազմակերպությունների հետ համագործակցությամբ.

1. Վրաստան- Georgian Foundation for Strategic and international Studies-www.gfsis.org
2. Հունգարիա- International Centre for Democratic Transition-www.icdt.hu
3. Չեխիա- Civil Society Development Foundation<http://www.nros.cz/en/>
4. Սլովակիա- PDCS, Partners for Democratic Change Slovakia-www.pdcs.sk
5. Լեհաստան- Court Watch Poland Foundation-www.courtwatch.pl



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	6
Հակիրճ ամփոփում	6
Ներածություն	8
Դիտարկման Արդյունքներ. իրականացման խնդիրներ կամ չափանիշներ	9
Դատարանի հասանելիություն/մատչելիություն	12
Դատական քննության տեսակը	13
Դատական նիստերի վերաբերյալ տեղեկություն	13
Դատական նիստերի բացում, կողմերի, իրավունքների, պարտականությունների ներկայացում	17
Դատավորի վերաբերմունքը կողմերի նկատմամբ	26
Դատավորի վարքագիծը կողմերի ներկայացրած փաստերի, միջնորդությունների առնչությամբ.....	37
Դատական նիստի հրապարակայնություն և թափանցիկություն	48
ՀԱԿԻՐՃ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԻՄԻ և ԿԱՊԱՆԻ ՆՍՏԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	49

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԻՐԱԿԱՆՑՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հակիրճ ամփոփում

Սույն մոնիտորինգի ընթացքում կատարվել են դիտարկումներ Երեվան քաղաքի 4 վարչական շրջանների դատարաններում, այն է՝ Մալաթիա-Սեբաստիա, Կենտրոն և Նորք-Մարաշ, Շենգավիթ, Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն: Դատարաններն ընտրվել են պատահականության սկզբունքով՝ հաշվի առնելով դրանց աշխարհագրական տեղաբաշխումը:

Դիտարկումներն ըստ դատարանների

Դատարան	Նիստերի քանակ
Մալաթիա-Սեբաստիա	14 դատական նիստեր
Կենտրոն և Նորք-Մարաշ դատարան	13
Շենգավիթ դատարան	7
Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն դատարան	6 դատական նիստ

Պետք է նշել, որ բոլոր դատարանները մուտք գործելիս, հարկավոր է անցագրային բաժնի աշխատակիցներին ներկայացնել անձի ինքնությունը և դատարան այցելելու նպատակը: Անցագրային կետը իրենից ներկայացնում է բաժին, որը ապահովում է տվյալ կառույցի անվտանգությունը մուտքի մոտ և այդպիսով հսկում է դատարան մուտք գործող բոլոր այցելուներին: Այն հանդիսանում է նաև դատարանի մասին «նախնական տեղեկություն» տրամադրող բաժին:

Դատարանում կարգը և անվտանգությունը հսկում են դատական կարգադրիչները, որոնք ներկա են գտնվում նաև դատական նիստերի դահլիճում և պետք եղած դեպքում պահպանում անվտանգությունը նաև նիստերի դահլիճում:

Սույն մոնիտորինգի ընթացքում բացի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի դատարանից, մոնիտորինգի իրականացմանը չեն խոչընդոտել, ավելին՝ հնարավորինս աջակցել են:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի դատարանում 2016 թվականի օգոստոսի երկուսին իրականացվող դիտարկման ժամանակ նկատվել է մեծ թվով կարգադրիչների առկայություն, այդ թվում նաև Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատարանից: Կարգադրիչներից մեկը, ճանաչելով ինձ, մոտեցավ և տեղեկացրեց, որ «հայտնի դեպքերի պատճառով «սանկցիա է» դատարանում», բանավոր սպառնալիք ներկայացնելով՝ դուրս հրավիրեց դատարանի շենքից:

Կենտրոն և Նորք-Մարաշ և Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն դատարանների մուտքի մոտ տեղակայված են բետոնե աստիճաններ, սակայն տեղաշարժվելու դժվարություն և սահմանափակում ունեցող անձանց համար հարմարեցվաց մուտք չկա:

Մոնիթորինգի մեջ ընդգրկված բոլոր դատարաններում դատական նիստերի դահլիճները գտնվում են երկրորդ հարկում և դատարանների շենքում տեղաշարժման դժվարություն և սահմանափակում ունեցող անձանց համար (չկա վերելակ կամ հարմարեցված սանդուղք):

Մալաթիա-Սեբաստիա և Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատարաններում թե առաջին, թե երկրորդ հարկում կան մեկից ավելի նստարաններ, որտեղ կողմերը կարող են սպասել:

Շենգավիթ վարչական շրջանի դատարանում տեղադրված է մեկ նստարան և միայն առաջին հարկում, Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի դատարանում ևս՝ մեկ նստարան առաջին և մեկ նստարան երկրորդ հարկերում:

Վերը նշված չորս վարչական շրջանների դատարաններից երեքում այցելուները հնարավորություն ունեն օգտվել զուգարանից, իսկ Կենտրոն և Նորք-Մարաշ դատարանում զուգարանները միայն աշխատակիցների համար են նախատեսված:

(զուգարանի դռները փակված են բանալիով):

Դատարանների շենքում տեղակայված է հեռուստաեկրան, որը նախատեսված է նիստերի ժամանակացույցը հրապարակելու համար, սակայն դիտարկումների իրականացման ընթացքում դրանք մշտապես անջատված են եղել և կարքադրիչները, անցագրային բաժնի աշխատակիցները տեղեկացրել են, որ դրանք չեն գործում: Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի դատարանում կարգադրիչներից մեկը տեղեկացրել են նաև, որ միայն ինքն է կարողանում միացնել այդ սարքը, և այնուհետև միացրել է այն:

Շենգավիթ վարչական շրջանի դատարանի համար 1 նիստերի դահլիճը՝ նիստերի դահլիճ «N 1»-ը կահավորված է այնպես, որ կողմերից բացի, այլ անձինք կարող են մասնակցել նիստերին ոչ թե այն սենյակում, որտեղ քննվում է գործը, այլ ապակով առանձնացված հատվածում: Շենգավիթ դատարանում դռնբաց դատական նիստերից մեկի ժամանակ դատավորի քարտուղարը ճշտելով, որ ես դատավարության կողմ չեմ ներկայացնում, այլ ուղղակի դիտորդ եմ, հարցրեց կողմերին՝ «դեմ չե՞մ, որ ես ներկա գտնվեմ նիստին»: Իսկ նիստի ավարտից հետո կողմերից մեկը հետաքրքրությամբ մոտեցավ և փորձեց ճշտել, թե ինչ կազմակերպություն եմ ներկայացնում:

Ներածություն

2016 թվականի ապրիլի 28-ին և 29-ին Հայաստանի և Վրաստանի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ակտիվ քաղաքացիներ մասնակցել են Վիշեգրադ հիմնադրամի աջակցությամբ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացված «Դատարանների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության նախաձեռնություն. Ինչպես հայտնաբերել իրավունքի գերակայության բացթողումները» թեմայով սեմինարին: Սեմինարի ընթացքում մասնակիցներին ներկայացվել է դատարանների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեթոդաբանությունը, քննարկվել են նաև տվյալների հավաքագրման և ներկայացման պրակտիկ օրինակներ:

Այնուհետև մշակվել է տեղեկատվության հավաքման համար համապատասխան չափանիշներով մշակված ձևաթուղթը:

Տեղեկատվություն հավաքող անձի և կազմակերպության հետ վերջինիս առնչության համար դատարաններին նախապես որևէ տեղեկություն չի ներկայացվել՝ ակնկալելով պարզել, թե կողմ չհանդիսացող անձի մուտքը, հասանելիությունը դատարան, նիստերի դիմում ինչպես է ապահովվում:

Դատարանում, մասնավորապես՝ Մալաթիա-Մեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանում, կարգադրիչները, նկատելով կողմ չհանդիսացող անձի, բավականին կասկածանքով արձագանքել են նիստին մասնակցելու ցանկությանը և նկատելով որ գրառումներ են կատարվում՝ հարցրել են, թե «ինչի համար է, եթե ես ուղղակի դիտորդ եմ և արդյոք կարող եմ ծանոթանալ գրառումներին»:

2016 թվականի հուլիսի 14-ից Երևան քաղաքում մեկնարկել է քաղաքացիական վերահսկողության և տվյալների հավաքագրման աշխատանքը, որը տևել է մինչև 2016 թվականի սեպտեմբերի 9-ը:

Դատական նիստերի մասին տեղեկությունները ստացվել են datalex.am դատական տեղեկատվական կայքից, պատահականության սկզբունքով, առանց թիրախային կամ հատուկ ընտրության:

Այնուամենայնիվ, նախապես ընտրված նիստերը փոփոխվել են, քանի որ հենց առաջին օրը Մալաթիա-Մեբաստիա դատարանի կարգադրիչներից տեղեկացվել է, որ կայքի տվյալները իրականությանը ոչ լրիվ են համապատասխանում և հաջորդ օրվա կոնկրետ նիստերի ժամերը պետք է ճշտել նրանցից:

Դիտարկման Արդյունքներ. իրականացման չափանիշներ

Սույն դիտարկումների ժամանակ հավաքվել են տեղեկություններ դատական գործերի բնույթի, (քրեական, քաղաքացիական) ներառյալ համապատասխան հոդվածը, գործը քննող դատավորի, մեղադրանքի կողմը ներկայացնող դատախազի, պաշտպանների մասին (հանրային, մասնավոր), դատավորի կողմից դատական նիստի վարման ընթացակարգային կանոնների պահպանման, դատավարության կողմերի նկատմամբ վերաբերմունքի մասին (արդյոք ներկայանում է նիստին մեղադրանքի կողմի հետ, ինչպես է դիմում ամբաստանյալին քրեական գործերի շրջանակներում, ինչպիսի վերաբերմունք է դրսևորում ամբաստանյալի և նրա պաշտպանի նկատմամբ, ինչպիսի վերաբերմունք է դրսևորում մեղադրական կողմի նկատմամբ):

Դիտարկումների ընթացքում տեղեկություններ են հավաքվել նաև դատական նիստերի հրապարակայնություն և թափանցիկություն վերաբերյալ (արդյոք զանգվածային լրատվության միջոցներին թույլատրվում է մասնակցել և ձայնագրություն կամ տեսանկարահանում իրականացնել նիստերին, արդյոք նիստին կարող են ներկա լինել այլ, դատավարության կողմեր չներկայացնող մարդիկ և այլն):

Դատավորներ	Դիտարկված նիստերի քանակ	Նիստերի օրեր	Դիտարկված նիստերի քանակ	Քրեակա ն գործեր	Քաղաքաց իական գործեր
------------	-------------------------------	-----------------	-------------------------------	--------------------	----------------------------

Ֆարխոյան Կ.Ս.	4	14.07.2016	5	24	16
Սարգսյան Լ.Տ.	3	15.07.2016	5		
Պապոյան Ռ.Լ.	4	18.07.2016	2		
Մկրտչյան Ա.Ս.	3	19.07.2016	6		
Պողոսյան Գ.Կ.	3	20.07.2016	7		
Մակյան Մ.Ե.	2	21.07.2016	2		
Ավետիսյան Է.Վ.	2	1.08.2016	7		
Մազմանյան Գ.Հ.	1	2.08.2016	2		
Մարտիրոսյան Մ.Վ.	1	9.09.2016	4		
Վարդանյան Ա	2				
Բեկթաշյան ԱԺ	1				
Ներսիսյան ՌՌ	1				
Հովսեփյան ՆԳ	2				
Զիչոյան Ա	1				
Բաղդասարյան ՆՌ	1				
Մարդանյան ԿՀ	2				
Բալայան ԴԿ	1				
Մաթևոսյան ԱԳ	1				
Նիկողոսյան ԱՍ	1				
Մկրտչյան ԱՊ	1				
Հովսեփյան ՍԵ	1				
Նախշթարյան ԶԿ	2				

Դիտարկված նիստերի քանակ ըստ դատավորների

Ֆարխոյան Կ.Ս.	4
Սարգսյան Լ.Տ.	3
Պապոյան Ռ.Լ.	4
Մկրտչյան Ա.Ս.	3
Պողոսյան Գ.Կ.	3
Մակյան Մ.Ե.	2
Ավետիսյան Է.Վ.	2
Մազմանյան Գ.Հ.	1
Մարտիրոսյան Մ.Վ.	1

Վարդանյան Ա.	2
Բեկթաշյան Ա.Ժ.	1
Ներսիսյան Ռ.Ռ.	1
Հովսեփյան Ն.Գ.	2
Չիչոյան Ա.	1
Բաղդասարյան Ն.Ռ.	1
Մարդանյան Կ.Հ.	2
Բալայան Դ.Կ.	1
Մաթևոսյան Ա.Գ.	1
Նիկողոսյան Ա.Ս.	1
Մկրտչյան Ա.Պ.	1
Հովսեփյան Ս.Ե.	1
Նախշթարյան Զ.Կ.	2

Դիտարկված նիստերի օրեր և քանակ՝

14.07.2016 – 5, 15.07.2016 – 5, 18.07.2016 – 2, 19.07.2016 – 6, 20.07.2016 – 7, 21.07.2016 – 2,
1.08.2016 – 7, 2.08.2016 – 2, 9.09.2016 – 4

Դիտարկված քրեական գործերի քանակ՝ 24

Դիտարկված քաղաքացիական գործերի քանակ՝ 16

Դատարանի հասանելիություն/մատչելիություն

Տվյալ մոնիտորինգի իրականացումը սկսվել է Մալաթիա-Մեքաստիա դատարանից: Այս դատարանը տեղակայված է Օտյան 53/2 հասցեում: Քանի որ Օտյան փողոցը կենտրոնական չի հանդիսանում, այստեղ հասարակական երթուղի չի գալիս: Սովորական մարդ այստեղ առաջին անգամ հասնելու համար պետք է օգտվի էլեկտրոնային քարտեզից: Երեվան քաղաքի թղթյա քարտեզներում այս փողոցը նշված չկա: Դատարանի շենքին մոտենալիս որևէ ցուցանակ կամ նշան հնարավոր չի տեսնել: Հեռավորությունից միակ նշանը, որ այն ներկայացնում է պետական կառույց շենքի տանիքին տեղադրված դրոշն է: Սակայն, եթե քաղաքացին Երեվան քաղաքի Մալաթիա համայնքի բնակիչ է և օգտվում է սույն համայնքի թաղապետարանի ծառայություններից, ապա կարելի է մոտավոր բացատրել, որ դատարանի շենքը գտնվում է թաղապետարանի հարևանությամբ սփռված այգու ետևի տարածքում՝ Արմին Վեգներ և Ռոմանոս Մելիքյան փողոցների խաչմերուկից մոտ 50 մետր դեպի աջ, ապա Սուրբ Աստվածածին Եկեղեցու դիմացի մայթից նոր խաչմերուկից ձախ դեպի ներքև: Հաջորդ դատարանը, որտեղ իրականացվել է մոնիտորինգը, Կենտրոն և Նորք-Մարաշ դատարանն է: Դատարանը գտնվում է Տոգրան Մեծի 23/1 հասցեում, կանգառի անմիջապես կողքին և Գրիքոր Լուսավորիչ եկեղեցու հարևանությամբ, ինչը հեշտացնում է այն գտնելը: Մոտենալով դատարանի շենքին կարելի է նկատել պատին փակցված ցուցանակը: Շենգավիթ դատարանը նույնպես գտնվում է քաղաքի կենտրոնական մասում՝ Արշակունյաց պողոտա 24/1, Կոմիտասի անվան իստիտուտ-թանգարանի աջ կողմում, ինչը բավականին օգնում է արագ գտնել այն: Մոտենալով շենքին, կարելի է նկատել պատին փակցված ցուցանակը: Իսկ Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն դատարանը տեղակայված է Ներսիսյան փողոց 10 հասցեում: Այստեղ կարելի է հասնել հասարակական տրանսպորտի օգնությամբ (Եվրոպական համալսարանի կանգառ, Դավիթ Անհաղթ- Ուլնեցու խաչմերուկից վերև և դեպի ձախ): Սակայն նախկին առաջին անգամ այցելելը օգտակար է հասցեն ճշտել քարտեզի միջոցով, քանի որ տվյալ փողոցի վրա կա երկու շինություն նման հասցեով: Դատարանի շենքին մոտենալիս նույնպես կարելի է նկատել ցուցանակը և տանիքին տեղադրված դրոշը:

Դատական քննության տեսակը

Սույն մոնիտորինգի ժամանակ դիտարկվել է 40 դատական նիստ, որոնցից ընդամենը մեկն է ընդացել «արագացված կարգով», մնացած 39 նիստերը ունեցել են «դատական քննության ընդհանուր կարգ»: «Դատական քննության արագացված կարգով» նիստը տեղի է ունեցել հուլիսի 20ին Կենտրոն և Նորք-Մարաշ դատարանում ժամը 10.00ին (գործ 0159): Նիստի դատավորն էր պ-ն ՄՎ Մարտիրոսյանը, որը նիստի հենց բացման ժամանակ հայտարարեց ըստ կանոնակարգի «ինչ գործ է քննվում, ում նախագահությամբ» և որ «նիստը քննվում է արագացված կարգով հաշվի առնելով նախորդ նիստին պաշտպանի ներկայացված միջնորդությունը»: Այնուհետև, հարցնելով կողմերին և ամբաստանյալին «ունեն արդյոք առարկություններ կամ հավելումներ» դատավորը ըստ կանոնակարգի ներկայացրեծ անցյալ նիստին ներկայացրած փաստաթղթերը, հիշեցրեծ, որ «կողմերը առարկություններ չունեն» և անցավ իր որոշման հայտարարությանը:

Դատական նիստերի վերաբերյալ տեղեկություն

Բոլոր 4 դատարաններում տեղի ունեցող դատական նիստերի մասին հնարավոր է տեղեկանալ datalex.am կայքից: Սակայն, քանի որ, կայքը գտնվում է «թեսթավորման փուլում», առկա են անհամապատասխանություններ: Մալաթիա-Սեբաստիա դատարանում ընթացիկ օրվա համար անցկացվող դատական նիստերի մասին տեղեկություն կարելի է ստանալ զանգահարելով 72-24-02 հեռախոսահամարով (անցագրային բաժին), արդեն իսկ դատարանում՝ կարգադրիչներից, որոնք ունեն նիստերի ցուցակը և օրվա վերջում ունենում են նաև հաջորդ օրվա նիստերի հստակ ժամանակացույցը, կամ զանգահարել կոնկրետ դատավորի աշխատակցային բաժին ներքին համարով, տեղում ճշտելու համար: Կենտրոն և Նորք-Մարաշ դատարանում տեղի ունեցող նիստերի մասին կարելի է ճշտել զանգահարելով անցագրային բաժին 54-79-15 հեռախոսահամարով, տեղում՝ նույնպես ստույգ տեղեկություն ստանալ կարգադրիչներից կամ զանգահարել հստակ դատավորի աշխատակցային բաժին ներքին համարով: Շենգավիթ դատարանում իրականացվող նիստերի մասին կարելի է իմանալ 44-14-30 հեռախոսահամարով (անցագրային բաժին), տեղում՝ ճշտել կարգադրիչներից կամ զանգահարել հստակ դատավորի աշխատակցային բաժին ներքին համարով, կամ օգտվել պատին փակցված օրվա նիստերի թղտյա ժամանակացույցից: Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն դատարանում անցկացվող դատական նիստերի մասին տեղեկություն կարելի է ստանալ զանգահարելով 24-08-31 հեռախոսահամարով (անցագրային բաժին), արդեն իսկ դատարանում՝ կարգադրիչներից կամ զանգահարել հստակ դատավորի աշխատակցային բաժին ներքին համարով, կամ նսիտերի ժամանակացույցի էկրանից (եթե միացրած լինի):

Մալաթիա-Մերաստիա դատարան

Ժամանակին սկսված նիստեր	Ուշացումով սկսված նիստեր
ԵՄԴ/1307 ԵՄԴ/0113 ԵՄԴ/0081 ԵՄԴ/0072 ԵՄԴ/0014 ԵՄԴ/0779 ԵՄԴ/1073 ԵՄԴ/1401	ԵՄԴ/0085 Ֆարխոյան ԿՍ ԵՄԴ/0220 Պապոյան ՌԼ ԵՄԴ/0036 Պապոյան ՌԼ ԵՄԴ/2838 Մկրտչյան ԱՍ ԵՄԴ/1824 Սարգսյան ԼՏ ԵՄԴ/1467 Սարգսյան ԼՏ

Ուշացումով սկսված նիստերի մեծ մասի մեկնարկը հետաձգվել է 5-10 րոպե, կողմերին նախապես որևէ տեղեկություն այդ մասին չի տրամադրվել, կողմերը առանձնապես չեն առարկել, այլ տեղեկացել են նիստի քարտուղարից, որ «դատավորը ժողովի է, կամ խորհրդակցում է նախագահի հետ և շուտով կներկայանա»: Միայն երկու դեպքում ուշացումը կազմեց 30 րոպեից ավել՝ դատավոր Պապոյանը նիստից ուշանում էր, կողմերը անհագստանում էին, քարտուղարը տեղեկություն չունեի, ներկայանալուն պես պ-ն Պապոյանը բացատրեց, որ «խորհրդակցական ժողովի էր մեկ այլ դատարանում և խցանման պատճառով ուշացավ» և ներողություն խնդրեց նիստի ներկաներից: Դատավոր Սարգսյանը նիստերից մեկին բավականին ուշանում էր, դատավարության կողմերը անհագստանում էին, քարտուղարը բացատրեց, որ տ-ն Սարգսյանը հիվանդանոցում է անձնական պատճառով: Ներկայանալուն պես դատավոր Սարգսյանը ներողություն խնդրեց ներկաներից և սկսեց նիստը:

Կենտրոն և Նորք-Մարաշ դատարան

Ժամանակին սկսված նիստեր	Ուշացումով սկսված նիստեր
ԵԿԴ/0312 ԵԿԴ/4422 ԵԿԴ/5555 ԵԿԴ/0159 ԵԿԴ/0120	ԵԿԴ/0027 Մակյան ՄԵ ԵԿԴ/1942 Մազմանյան ԳՀ ԵԿԴ/0097 Մակյան ՄԵ ԵԿԴ/0042 Պողոսյան ԳԿ ԵԿԴ/ 0003 Բեկթաշյան ԱԺ ԵԿԴ/0441 Ներսիսյան ՌՌ ԵԿԴ/0317 Վարդանյան Ա ԵԿԴ/0323 Պողոսյան ԳԿ

Նիստերի մեծ մասը սկսվել է 5-15 րոպե ուշացումով, կողմերին նախապես վորևէ տեղեկություն այդ մասին չի տրամադրվել, կողմերը առանձնապես չեն առարկել, նիստի քարտուղարը վորևէ տեղեկություն ուշացման մասին ներկաներին չի հայտնել:

Դատավորները նիստին ներկայանալով ներողություն ուշացման համար չեն խնդրել: Դատավոր Պողոսյանի նախագահությամբ ԵԿԴ/0042 նիստը ընդմիջվեց 30ից ավել րոպեով պաշտպանի կողմից ներկայացված միջնորդությունը քննարկելու համար, այնուհետև շարունակվեց ևս մոտ 1.30 ժամ, որից հետո դատավորը հեռացավ երկար մոտ 1 ժամ ժողովի: Դրա պատճառով հաջորդ ԵԿԴ/0323 գործով նիստը սկսվեց նշված ժամից մոտ 1 ժամ ուշացումով: Կողմերը խիստ անհանգստացած էին, սակայն քարտուղարը մոտեցավ նիստի մասնակիցներին, բացատրեց իրավիճակը և ներողություն խնդրեց: Դատավարության կողմերը առարկություն չհայտնեցին:

Շենգավիթ դատարան

Ժամանակին սկսված նիստեր	Ուշացումով սկսված նիստեր
ԵՇԴ/0565 ԵՇԴ/0070	ԵՇԴ/2048 Չիչոյան Ա ԵՇԴ/0179 Բադդասարյան ՆՌ ԵՇԴ/0037 Մարդանյան ԿՀ ԵՇԴ/0052 Մարդանյան ԿՀ ԵՇԴ/3811 Հովսեփյան ՆԳ

Այս դատարանում բոլոր ուշացումով սկսված նիստերը հետաձգվել են ընդամենը 10 րոպե ժամանակով: Նիստերի քարտուղարը որևէ բացատրություն կողմերին չի ներկայացրել, դատավարության կողմերը առարկություն չեն ներկայացրել, սպասել են դատավորի գալուն:

Արաբկիր Քանաքեռ-Զեյթուն

Ժամանակին սկսված նիստեր	Ուշացումով սկսված նիստեր
ԵԱՔԴ/ 1226	ԵԱՔԴ/0087 Նիկողոսյան ԱՍ ԵԱՔԴ/0201 Մաթևոսյան ԱԳ ԵԱՔԴ/0212 Մկրտչյան ԱՊ ԵԱՔԴ/4199 Հովսեփյան ՍԵ ԵԱՔԴ/1196 Նախշբարյան ԶԿ

Այս դատարանում կայացած նիստերի մեծ մասը սկսվել է ուշացումով: ԵԱՔԴ/0201 գործը դատավոր Մաթևոսյանի նախագահությամբ սկսվեց 25 ուշացումով, որովհետև ամբաստանյալներից մեկը, որը գտնվում էր տնային կալանքի տակ, ուշանում էր: Հետևաբար բոլորը, այդ թվում նաև դատավորը ստիպված էին սպասել: ԵԱՔԴ/0087 գործը դատավոր Նիկողոսյանի նախագահությամբ սկսվեծ 15 րոպե ուշացումով, որովհետև ուշանում էին ամբաստանյալները կալանքի վայրից: Կողմերը որևէ առարկություն նիստի քարտուղարին կամ դատավորին այս պատճառով չարտահայտեցին, երբ բոլոր կալանավորները «ժամանեցին», նիստի քարտուղարը հրահանգեց դատավորին, վերջինս նոր այդ ժամանակ մտավ դահլիճ և սկսվեց նիստը: ԵԱՔԴ/0212 գործը դատավոր Մկրտչյանի նախագահությամբ սկսվեց մոտ 30 րոպե ուշացումով, որովհետև ուշանում էր ամբաստանյալներից մեկը, որը գտնվում էր տնային կալանքի տակ: Մեղադրող կողմը 15 սպասելուց հետո, հեռացավ, իսկ դատավորը եկավ և բացեց նիստը միայն ամբաստանյալի ժամանելուն պես: ԵԱՔԴ/4199 գործը դատավոր Հովսեփյանի նախագահությամբ սկսվեց մոտ 20 րոպե ուշացումով, որովհետև դատավորը ժողովի էր նախագահի մոտ, ինչպես ենթադրում էր քարտուղարը, որը ստույգ տեղեկություն չունեի: Պատասխանող կողմը

բավականին անհագստանում էր, բողոքում էր, բայց չհեռացավ մինչև դատավորի ներկայանալը: Ներկայանալուն պես դատավորը ներողություն չխնդրեց ներկաներից ուշանալու համար, այլ բացեց նիստը: ԵԱԲԴ/1196 գործը դատավոր Նախշբարյանի նախագահությամբ սկսվեց մոտ 20 րոպե ուշացումով, քանի որ դատավորը խնդրեց մյուս կողմին տրամադրել ժամանակ, որ պատասխանող կողմը ժամանի: Հայցվորի կողմը չառարկեց և ժամանակը անցնելուն պես դատավորը սկսեց նիստը:

Դատական նիստերի բացում, կողմերի, իրավունքների, պարտականությունների ներկայացում

Դատավորներ	Նիստի բացում/քաղաքացիական	Նիստի բացում/քրեական	Կողմերի իրավունքների և պարտականությունների, բացարկ անելու իրավունքի ներկայացում
Ֆարխոյան ԿՍ		ԵՄԴ/0085՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Սարգսյան ԼՏ	ԵՄԴ/1307՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Պապոյան ՌԼ		ԵՄԴ/0220՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Ֆարխոյան ԿՍ		ԵՄԴ/0113՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի

		կողմերին	
Պապոյան ՌԼ		ԵՄԴ/0336՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
ՖարխոյանԿՍ		ԵՄԴ/0014՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
ՄկրտչյանԱՍ	ԵՄԴ/2838՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
ՖարխոյանԿՍ		ԵՄԴ/0072՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Պապոյան ՌԼ		ԵՄԴ/0081՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Պապոյան ՌԼ		ԵՄԴ/0779՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի

		մասնակից կողմերին	
Սարգսյան ԼՏ	ԵՄԴ/1824՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Սարգսյան ԼՏ	ԵՄԴ/1467՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Պողոսյան ԳԿ		ԵԿԴ/0312՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմերին միայն ինքնաբացարկի միջնորդություն անելու ցանկության մասին
Մակյան ՄԵ		ԵԿԴ/0027՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմերին միայն ինքնաբացարկի միջնորդություն անելու ցանկության մասին
Ավետիսյան ԷՎ	ԵԿԴ/4422՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Ավետիսյան ԷՎ	ԵԿԴ/5555՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ		Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմերին միայն ինքնաբացարկի

	քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		միջնորդություն անելու ցանկության մասին
Մազմանյան ԳՀ	ԵԿԴ/1942՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Մակյան ՄԵ		ԵԿԴ/0097՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմերին միայն ինքնաբացարկի միջնորդություն անելու ցանկության մասին
Մարտիրոսյան ՄՎ		ԵԿԴ/0159՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Վարդանյան Ա		ԵԿԴ/0120՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմերին միայն ինքնաբացարկի միջնորդություն անելու ցանկության մասին
Պողոսյան ԳԿ		ԵԿԴ/0042՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմերին միայն ինքնաբացարկի միջնորդություն անելու ցանկության մասին
Բեկթաշյան ԱԺ		ԵԿԴ/0003՝ քարտուղարը հայտարարում է նիստի	Նիստի բացման ժամանակ

		բացումը ներկայացնում կողմերին	և ներկայացնում է ըստ օրենքի
Ներսիսյան ՌՌ	ԵԿԴ/0441՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմին միայն ինքնաբացարկի միջնորդություն անելու ցանկության մասին
Վարդանյան Ա		ԵԿԴ/0317՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Պողոսյան ԳԿ		ԵԿԴ/0323՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Մկրտչյան ԱՄ	ԵՄԴ/1401՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Մկրտչյան ԱՄ	ԵՄԴ/1073՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Հովսեփյան ՆԳ	ԵՇԴ/0565՝ դատավորը հայտարարում է նիստի		Նիստի բացման ժամանակ

	բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		ներկայացնում է ըստ օրենքի
Չիչոյան Ա	ԵՇԴ/2048՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Բաղդասարյան ՆՌ		ԵՇԴ/0179՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Մարդանյան ԿՀ		ԵՇԴ/0037՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Մարդանյան ԿՀ		ԵՇԴ/0052՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Բալայան ԴԿ		ԵՇԴ/0070՝ քարտուղարը հայտարարում է նիստի բացումը և ներկայացնում կողմերին	Նիստի բացման ժամանակ հարցնում է կողմերին միայն ինքնաբացարկի միջնորդություն անելու ցանկության մասին
Հովսեփյան ՆԳ	ԵՇԴ/3811՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի

	քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		
Մաթևոսյան ԱԳ		ԵԱՔԴ/0201՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Նիկողոսյան ԱՍ		ԵԱՔԴ/0087՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին	Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Մկրտչյան ԱՊ	ԵԱՔԴ/0212՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Հովսեփյան ՍԵ	ԵԱՔԴ/4199՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Նախշբարյան ԶԿ	ԵԱՔԴ/1196՝ դատավորը հայտարարում է նիստի բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		Նիստի բացման ժամանակ ներկայացնում է ըստ օրենքի
Նախշբարյան ԶԿ	ԵԱՔԴ/1226՝ դատավորը հայտարարում է նիստի		Նիստի բացման ժամանակ

	բացումը և ինչ գործ է քննվում, իսկ քարտուղարը ներկայացնում է մասնակից կողմերին		ներկայացնում է ըստ օրենքի
--	---	--	---------------------------

Մալաթիա-Սեբաստիա դատարանի գրեթե բոլոր դատավորների նախագահությամբ նիստերը բացել են դատավորները, իսկ քարտուղարները ներկայացրել են նիստի մասնակից կողմերին: Բացառություն են կազմել միայն պ-ն Ֆարիտյանի նախագահությամբ նիստերը, որոնց բացումը իրականացրել է նիստի քարտուղարը: Ինչ վերաբերվում է կողմերին իրենց իրավունքների և պարտականությունների բացատրությանը, ինչպես նաև բացարկ անելու հնարավորությանը, ապա պետք է նշել, որ բոլոր դատավորները նիստի բացման ժամանակ կողմերին պատշաճ ներկայացրել են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հարցրել են կողմերին արդյոք նրանք բացարկ ներկայացնելու ցանկություն ունեն:

Կենտրոն և Նորք-Մարաշ դատարաններում գրեթե բոլոր նիստերը բացել են դատավորները, իսկ նիստի քարտուղարները հայտարարել են մասնակից կողմերին: Բացառություն է կազմել պ-ն Բեկթաշյանի նախագահությամբ նիստը, որը բացել է նիստի քարտուղարը: Նիստերի մեծամասնության բացման ժամանակ դատավորները հարցրել են միայն բացարկ անելու ցանկության մասին, ինչը կարել է երևի բացատրել նրանով, որ դրանք հերթական նիստեր էին, այլ ոչ առաջին: Բացառություն են կազմել պ-ն Պողոսյանի նախագահությամբ ԵԿԴ/0323 նիստը, պ-ն Վարդանյանի նախագահությամբ ԵԿԴ/0317 նիստը, պ-ն Բեկթաշյանի նախագահությամբ ԵԿԴ/0003 նիստը, պ-ն Մարտիրոսյանի նախագահությամբ ԵԿԴ/0159 նիստը, տ-ն Մազմանյանի նախագահությամբ ԵԿԴ/1942 նիստը և պ-ն Ավետիսյանի նախագահությամբ ԵԿԴ/4422 նիստը, որոնց բացման ժամանակ դատավորները կողմերին պատշաճ ներկայացրել են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հարցրել են կողմերին արդյոք նրանք բացարկ ներկայացնելու ցանկություն ունեն:

Շենգավիթ դատարանում դիտված նոստերից միայն երկու դատավորներ՝ տ-ն Հովսեփյանը և պ-ն Զիչոյանն են բացել նիստերը, իսկ քարտուղարները ներկայացրել են դատավարության կողմերին: Դատավորներ Բալայան, Բադդասարյան և Մարդանյանի նախագահությամբ նիստերի բացումը, ինչպես նաև կողմերին հայտարարել են քարտուղարները: Ինչ վերաբերվում է կողմերին իրենց իրավունքների և պարտականությունների բացատրությանը, ինչպես նաև բացարկ անելու հնարավորությանը, ապա պետք է նշել, որ գրեթե բոլոր դատավորները նիստի բացման ժամանակ կողմերին պատշաճ ներկայացրել են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հարցրել են կողմերին արդյոք նրանք բացարկ ներկայացնելու ցանկություն ունեն: Բացառություն է կազմել միայն պ-ն Բալայանի նախագահությամբ նիստը, որի բացման ժամանակ դատավորը հարցրել է կողմերին միայն բացարկ ներկայացնելու ցանկության մասին:

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն դատարանում դիտված նիստերից բոլորի բացումը հայտարարել են դատավորները, իսկ քարտուղարները հայտարարել են մասնակից կողմերին: Ինչ վերաբերվում է կողմերին իրենց իրավունքների և պարտականությունների բացատրությանը, ինչպես նաև բացարկ անելու հնարավորությանը, ապա պետք է նշել, որ բոլոր դատավորները նիստի բացման ժամանակ կողմերին պատշաճ ներկայացրել են իրենց իրավունքներն ու պարտականությունները և հարցրել են կողմերին արդյոք նրանք բացարկ ներկայացնելու ցանկություն ունեն:

Դատավորի վերաբերմունքը կողմերի նկատմամբ

Մալաթիա-Մեքսսոիա դատարան/Դատավորներ	Քրեական գործեր		Քաղաքացիական գործեր	
	Ամբաստանյալի և նրա պաշտպանի նկատմամբ	Մեղադրող կողմի նկատմամբ	Հայցվորի և նրա ներկայացուցչի նկատմամբ	Պատասխանողի և նրա ներկայացուցչի նկատմամբ
Ֆարխոյան ԿՍ, ԵՄԴ/0085	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց մի պահ պաշտպանին ընդհատում է, չի թողնում վերջացնի իր խոսքը	ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց մի պահ արագ արձագանքում է մեղադրանքի կողմի հարցերին և պահանջներին		
Սարքսյան ԼՏ, ԵՄԴ/1307			ընդհառաջում է հայցվորի միջնորդություններին, արձագանքում է նրա հարցերին և պահանջների	դիմում է ընդգծելով նրա իրականացված գործողությունները բացասական կարգով, հեզնում է ասածները, հարցերի մեջ կա կշտամբանք.նե

				րկայացուցին ընդհատում է, չի թողնում վերջացնի խոսքը
Պապյան ՌԼ, ԵՄԴ/0220	դրսևորում է չեզոք վերաբերմունք	ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Ֆարխոյան ԿՍ, ԵՄԴ/0113	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց մի պահ պաշտպանին ընդհատում է, չի թողնում վերջացնի իր խոսքը	ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Պապյան ՌԼ, ԵՄԴ/0036	ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց ամբաստանյալ ին դիմում է ընդգծված խիս տոնով	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Ֆարխոյան ԿՍ, ԵՄԴ/0014	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Մկրտչյան ԱՄ, ԵՄԴ/2838			դրսևորում է չեզոք վերաբերմուն ք	դրսևորում է չեզոք վերաբերմունք
Ֆարխոյան ԿՍ, ԵՄԴ/0072	դրսևորում է չեզոք	դրսևորում է չեզոք		

	վերաբերմունք	վերաբերմունք		
Պապոյան ՌԼ, ԵՄԴ/0081	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմունք		
Պապոյան ՌԼ, ԵՄԴ/0779	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմունք		
Սարգսյան ԼՏ, ԵՄԴ/1824			դրսևորում է չեզոք վերաբերմունք	ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմունք,բայց պատասխանողին ուղղված հարցերի մեջ կա կշտամբանք
Սարգսյան ԼՏ, ԵՄԴ/1467			դրսևորում է չեզոք վերաբերմունք	ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմունք,բայց դիմում է խիստ տոնով, ընդհատում է
Մկրտչյան ԱՄ, ԵՄԴ/1401			ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմունք,բայց տրամադրում է ավելի շատ Ժամանակ, կանխում է հայցվորի անհարգալից	դրսևորում է չեզոք վերաբերմունք

			վերաբերմունքը պատասխանողի նկատմամբ	
Մկրտչյան ԱՄ, ԵՄԴ/1073			դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց հարցերը ճշգրտում է հայցվորի կողմի հետ	պատասխանողին դիմելիս քմծիղաղում է, գործի հանգամանքներին վերաբերյալ ներկայացնում է փաստարկներ, որոնցով արաքի իրականացումը վերագրում է նրան

Ըստ դիտարկումների կարելի է նկատել, որ Մալաթիա-Մեքսստիա դատարանում տեղի ունեցած նիստերից քրեական գործերով նիստերի նախագահող դատավորները դրսևորել են ընդհանուր առմամբ չեզոք վերաբերմունք թե ամբաստնյալի, թե մեղադրող կողմի նկատմամբ:

Իսկ քաղաքացիական գործերով նիստերի ժամանակ դատավորները եղել են ավելի զգացմունքային և դրսևորել են տարբերակված վերաբերմունք թե հայցվոր, թե պատասխանող կողմերի նկատմամբ:

Կենտրոն և Նորք-Մարաշ դատարան/Դատավոր Ներ	Քրեական գործեր		Քաղաքացիական գործեր	
	Ամբաստանյալի և նրա պաշտպանի նկատմամբ	Մեղադրող կողմի նկատմամբ	Հայցվորի և նրա ներկայացուցչի նկատմամբ	Պատասխանողի և նրա ներկայացուցչի նկատմամբ
Պողոսյան ԳԿ, ԵԿԴ/0312	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմունք		
Մակյան ՄԵ, ԵԿԴ/0027	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմունք		

		նք, ժեստով ստիպում է մեղադրողի ն քիչ զգացմունք ային ներկայացնե լ ամբաստանյ ալի գործողությո ւնները		
Ավետիսյան ԷՎ, ԵԿԴ/4422			ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմուն ք,բայց տրամադրում ավելի շատ ժամանակ խոսելու համար	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց ոչինչ չի ձերնարկում, երբ պատասխանող ի ներկայացուցիչ ը խնդրում է կասեցնել հայցվորի «շատախոսությ ունք»
Ավետիսյան ԷՎ, ԵԿԴ/5555			դրսևորում է չեզոք վերաբերմուն ք	դրսևորում է չեզոք վերաբերմունք
Մազմանյան ԳՀ, ԵԿԴ/1942			դրսևորում է չեզոք վերաբերմուն ք, բայց խոսելու համար ավելի շատ ժամանակ է տրամադրում	դրսևորում է չեզոք վերաբերմունք
Մակյան ՄԵ, ԵԿԴ/0097	ընդհանուր	դրսևորում է		

	առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց ամբաստանյալ ին հարցերի մեջ կա կշտամբանք	չեզոք վերաբերմու նք		
Մարտիրոսյան ՄՎ, ԵԿԴ/0159	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Վարդնյան Ա, ԵԿԴ/0120	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Պողոսյան ԳԿ, ԵԿԴ/0042	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց ամբաստանյալ ին դիմելիս չի նայում նրան, պաշտպանին՝ ընդգծված խիստ տոնով կրկնում հարցը	դրսևորում է չեզոք վերաբերմու նք, բայց մեղադրանք ի կողմը նիստերի դահլիճ է մտնում դատավորն երի համար նախատեսվ ած մուտքից		
Բեկթաշյան ԱԺ, ԵԿԴ/0003	ընդհանուր առմամբ դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց դիմելիս չի նայում ամբաստանյալ ին և հեզնում է նրա ասածները	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Ներսիսյան ՌՌ,			դրսևորում է	պատասխանող

ԵԿԴ/0441			չեզոք վերաբերմուն ք	ը բացակայում էր, չնայաց պատշաճ ծանուցված էր
Վարդանյան Ա, ԵԿԴ/0317	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց ամբաստանյալ ին դիմելիս չի նայում նրան	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Պողոսյան ԳԿ, ԵԿԴ/0323	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց դիմում է ամբաստանյալ ին խիստ տոնով, չի մերժում նրա խնդրանքը	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		

Կենտրոնն և Նորք-Մարաշ դատարանում քրեական գործերով նիստերի նախագահող դատավորները դրսևորել են ընդհանուր առմամբ չեզոք վերաբերմունգ թե ամբաստանյալի, թե մեղադրող կողմի նկատմամբ: Սակայն դատավորների մեծամասնությունը դիմելիս չի նայել ամբաստանյալին, կամ դիմել է վերջինին ընդգծված խիստ տոնով: Հարկ է նշել նաև, որ պ-ն Պողոսյանի նախագահությամբ ԵԿԴ/0042 գործով նիստից առաջ մեղադրող կողմը մտավ նիստերի դահլիճ դատավորի համար նախատեսված մուտքից:

Քաղաքացիական գործերով նիստերի դատավորները նույնպես դրսևորել են չեզոք վերաբերմունք կողմերի նկատմամբ: Բայց դատավորներ Մազմանյանը և Ավետիսյանը (ԵԿԴ/4422) հայցվորի կողմին խոսելու համար ավելի շատ ժամանակ են տրամադրել:

Շենգավիթ դատարան/Դատավոր Ներ	Քրեական գործեր		Քաղաքացիական գործեր	
	Ամբաստանյալ ի և նրա պաշտպանի նկատմամբ	Մեղադրող կողմի նկատմամբ	Հայցվորի և նրա ներկայացուց չի նկատմամբ	Պատասխանող ի և նրա ներկայացուցչի նկատմամբ
Հովսեփյան ՆԳ, ԵՇԴ/0565			դրսևորում է չեզոք վերաբերմուն ք	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց պատասխանող ին հարցերի հարցերի մեջ կա կշտամբանք
Չիչոյան Ա, ԵՇԴ/2048			դրսևորում է չեզոք վերաբերմուն ք, բայց հայցվորին հարցերը ճշգրտում է պատասխան ող կողմի հետ	դրսևորում է չեզոք վերաբերմունք
Բաղդասարյան ՆՌ, ԵՇԴ/0179	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց դիմելիս չի նայում ամբաստանյալ ին	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց խոսելու ավելի շատ Ժամանակ է տրամադրու մ		
Մարդանյան ԿՀ, ԵՇԴ/0037	դրսևորում է չեզոք վերաբերմունք	մեղադրող կողմը բացակայու մ էր, չնայաց պատշաճ ծանուցված		

		էր		
Մարդանյան ԿՀ, ԵՇԴ/0052	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց ամբաստանյալ ին դիմում է խիստ տոնով	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Բալայան ԴԿ, ԵՇԴ/0070	դրսևորում է չեզոք վերաբերմունք	դրսևորում է չեզոք վերաբերմու նք		
Հովսեփյան ՆԳ, ԵՇԴ/3811			դրսևորում է չեզոք վերաբերմուն ք	դրսևորում է չեզոք վերաբերմունք, դիմելիս չի նայում պատասխանող ին

Շենգավիթ դատարանում քաղաքացիական գործով նիստերի դատավորները ընդհանուր առմամբ դրսևորել են չեզոք վերաբերմունք կողմերի նկատմամբ: Բայց դատավոր Հովսեփյանը նիստերի ժամանակ պատասխանողին դիմելիս չի նայել վերջինիս ուղղությամբ կամ պատասխանողին հարցերի մեջ եղել է կշտամբանք: Իսկ դատավոր Չիչոյանը նիստի ժամանակ պատասխանողին հարցերը ճշտում էր հայցվորի հետ: Քրեական գործերով նիստերի դատավորները նույնպես մեծամասնությամբ դրսևորել են չեզոք վերաբերմունք կողմերի նկատմամբ, սակայն ամբաստանյալին դիմել են խիստ տոնով, կամ չեն նայել վերջինիս ուղղությամբ:

Արաբկիր Քանաքեռ- Զեթուն դատարան/Դատավոր Ներ	Քրեական գործեր		Քաղաքացիական գործեր	
	Ամբաստանյալ ի և նրա պաշտպանի նկատմամբ	Մեղադրող կողմի նկատմամբ	Հայցվորի և նրա ներկայացուց չի նկատմամբ	Պատասխանող ի և նրա ներկայացուցչի նկատմամբ
Մաթևոսյան ԱԳ, ԵԱՔԴ/0201	դրսևորում է չեզոք	դրսևորում է չեզոք		

	վերաբերմունք, բայց չի կարողանում բացատրություն տրամադրել ամբաստանյալի հարցերին	վերաբերմունք		
Նիկողոսյան ԱՍ, ԵԱՔԴ/0087	դրսևորում է չեզոք վերաբերմունք, բայց ամբաստանյալին դիմելիս խոսում է արագ և խիստ տոնով	դրսևորում է չեզոք վերաբերմունք		
Մկրտչյան ԱՊ, ԵԱՔԴ/0212	ամբաստանյալին դիմում է բավակաինին խիստ տոնով	մեղադրող կողմը բացակայում էր		
Հովսեփյան ՍԵ, ԵԱՔԴ/4199			դրսևորում է չեզոք և համբերատար վերբերմունք չնայաց վերջինիս անկանոն հայտարարություններին	դրսևորում է չեզոք վերաբերմունք
Նախշարյան ԶԿ, ԵԱՔԴ/1196			դրսևորում է չեզոք վերաբերմունք	պատասխանող կողմը բացակայում էր, չնայաց պատշաճ ծանուցված էր
Նախշարյան ԶԿ, ԵԱՔԴ/1226			դրսևորում է չեզոք վերաբերմունք	պատասխանող կողմը բացակայում էր, չնայաց պատշաճ

				ծանուցված էր
--	--	--	--	--------------

Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն դատարանում կայացած քրեական գործերով նիստերի դատավորները դրսևորել են ընդհանուր առմամբ չեզոք վերաբերմունք թե ամբաստանյալի, թե մեղադրող կողմի նկատմամբ: Սակայն դատավորների մեծամասնությունը ամբաստնյալին դիմել է ընդգծված խիստ տոնով, կամ չի նայել վերջինիս ուղղությամբ: Քաղաքացիական գործերով նիստերի դատավորները դրսևորել են չեզոք վերաբերմունք թե հայցվորի, թե պատասխանողի նկատմամբ:

**Դատավորի վարքագիծը կողմերի ներկայացրած փաստերի,
միջնորդությունների առնչությամբ**

Մալաթիա-Սեբաստիա դատարան/Դատա Կորներ	Ներկայացված փաստեր, միջնորդություններ/Քրե ական գործեր	Ներկայացված փաստեր, միջնորդություններ/Քաղաքացիական գործեր	Կողմերի վերաբերմունք դատավորի որոշման հանդեպ
Ֆարխոյան ԿՍ, ԵՄԴ/0085	ուշադիր լսում է երկու կողմերի ներկայացված փաստերին, միջնորդություններ չեն ներկայացվել		նշանակվել է հաջորդ դատական նիստ, կողմերը չեն առարկել
Սարգսյան ԼՏ, ԵՄԴ/1307		ընդառաջում է հայցվորի ներկայացուցչի միջնորդությանը	նշանակվել է հաջորդ դատական նիստ, կողմերը չեն առարկել
